ԼԴ. Ի 20-էն դեկտեմ. 1894 ամի, այն է՝ յօրէ գնալոյ Տ. Մկրտիչ Կաթուղիկոսի ի Ս. Պետերբուրգ առ Կայսրն ամենայն Ռուսաց Նիկոլայ Բ. ի խնդիր ազատութեան տառապեալ տաճկահայոց յերեսաց բռնութեանց տաճկաց և քրդաց, և ցվերադարձ Նորին Օծութեան յէջմիածին ի 20 յուլիսի 1895 ամի, որ է յընթացս եօթն ամսոց, ըստ յանձնարարութեան Նորին Սրբութեան, վարեցի զպաշտօն Տեղապահի կաթուղիկոսութեան ամենայն Հայոց (տես *Արարատ* ամսագրի նոյն 1895 թուի քանի տետրակներն և 1896 թուի ապրիլի ամիսն, յերես 190)։

ԼԵ. Բացի վերոգրեալ պաշտօնավարութեանցս՝ նա և կատարել եմ կաթուղիկոսաց և Սինոդի զանազան գրաւոր և բանաւոր հրամանները. զոր օրինակ 1884 թուի օգոստոսին կալուածական և դպրոցական գործերով Տփխիս գնալս։ 1875 թուին Երնջակի Ս. Կարապետի վանքը գնալով, շինութեանց ծախուց ստուգութեանը վերահասութիւն գործելս։ 1878 թուին Տաթեւու վանքի կալուածոց գործերը կարգի դնելու համար Ղուշի և Գանձակ քաղաքները գնալս։ 1886 թուին Հաւիճոյ վանքի կալուածոց համար և 1887 թուին նոյն վանքի ընկերութեան բազմամեայ հաշիւները ստուգելու համար Ալէքսանդրօպոլ քաղաքը գնալս, և այլն։

Իսկ իմ աշխատասիրած գրաւոր վաստակներն են հետեւեալքն.—

Ա. *Տեղագիր Դեղարքունի Ծովազարդ գաւառի* և 73 հայաբնակ գիւղօրէից ու 80 օտարազգաբնակ գիւղօրէից գաւառի նորա. գրեալ յամին 1862—1863, որ բեւեռաձեւ արձանագրութեանց թարգմանութեան պատճառաւ ցայսօր մնացել էր առանց հրատարակութեան, ըստ որում այն գաւառի մէջ են Էլառի, Ադամխանի և Ալիչալուի արձանագրութիւնքն 1862 թուին գտած, որք տպած են Մոսկուայի «Համբաւաբեր Ռուսիոյ» հայ լրագրի մէջ 1863 ամի։